Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

## ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ

Դուրս էի եկել օդ շնչելու. ձիով էի: Քիչ արշավելուց հետո, Շիմրանի լայն ծառուղվո միջից, աջ կողմումս երևաց մի ջուր և նրա կողքին էլ՝ մի սրճարան:

Ձիուց ցած իջա, կապեցի նրան մի ծառից և ներս մտա թեյ խմելու նպատակով:

Ներսում հողից շինված և փաթաթներով ծածկված օթոցների վրա նստոտել էին 5—6 պարսիկներ, փաթաթված իրենց աբաների մեջ: Չնայելով որ արև էր, բայց ցուրտ էր դեռ. հունվար ամսվա մեջ էինք:

Թեյ ուզեցի և նստեցի: Պարսիկներից մեկը, որպես հատուկ է պարսկական լեզվին, պատմում էր լիքը բերնով, թե որպիսի շքեղությամբ Թեհրան մուտք է գործել թագաժառանգը: Մյուսները զմայլությամբ լսում էին:

Երկու հոգի, կկզած պատի տակ, կարծես երազում էին. նրանց մեռելային դեմքը և մոլորված աչքերը ցույց էին տալիս, որ նոր էին սթափվել օպիումի ազդած թուլությունից:

Թեյի փոքրիկ գավաթը կողքիս դրվեց. պատրաստվում էի խմել, երբ երկու նոր անձեր սրճարան մտան:

Նրանցից մեկը գրեթե պատանի էր, իսկ մյուսը՝ երիտասարդ: Սա փաթաթվել էր մի աբայի մեջ, իսկ մյուսը հագին ուներ միայն մի հնամաշ կապույտ արխալուղ: Ցրտից սաստիկ դողում էր. երկուսի ոտքերն էլ բոբիկ էին, հագցրած հին հողաթափների մեջ:

— Դու նստիր քիչ, Խոսրով,— ասաց հասակավորը պատանուն, երբ հառաջանում էին դեպի մեզ:

Պատանին մերժեց և կանգ առավ ավազանի կողքին: Դժգույն էր, աչքերի մեջ այնքան ակներև կերպով թախիծ կար գծված, որ մարդ ակամա տխրությամբ համակվում էր նրան նայելիս. պատանի հասակից սկսած վիշտն ու դառնություններն ընկճում էին նրան:

Անունից ենթադրեցի, որ կրակապաշտ պարսիկ պիտի լինեին նրանք:

Հասակավորն ուղղակի մոտ գնաց սրճագործին ու ընդհանուր լռության մեջ, որովհետև պատմիչը լռել էր և եկողներին էր զննում, ասաց.

— Ինձ քիչ փող է հարկավոր, մեշեդի. այս վրայիս վերարկուն ծախում եմ, չե՞ս առնիլ:

Սրճագործը, որ երևի շատ այդպիսիների հանդիպած կլիներ, ուղղակի հարց դրեց.

— Քանի՞,— ասաց նա զննելով աբան:

— Չորս թուման արժե,— խոսեց ծախողը,— բայց երկու թումանով կտամ:

— Օհո՜...— ծիծաղեց մեշեդին,— այս կտրտված վերարկուին երկու թումա՞ն... դարձիր մեկ տեսնե՞մ:

Վերարկուի տերն իր վրա դարձավ և մեջքը ցույց տվեց:

— Կտրտված չկա,— դիտեց նա,— նոր ժամանակ 6—7 թումանով հազիվ տան:

— Լավ, լավ, մեջը մեկ ցո՛ւյց տուր:

Այն ժամանակ պարսիկը բաց արավ միմյանց վրա բերած վերարկուի փեշերը և ցած ձգեց աբան: Ամենից առաջ ես տեսա:

Վերարկուն ծախելուց հետո թշվառը մնալու էր մի բարակ կտավե շապիկով:

Մի շարժում հառաջացավ նստող պարսիկների մեջ:

— Մարդ աստուծո,— գոչեց պատմիչը ծախողին,— ինչպե՞ս ես ծախում միակ հագուստդ, չէ՞ որ ցրտից կսառես:

— Ի՞նչ անեմ,— ասաց տխրությամբ ծախողը,— փողի պետք ունիմ... շատ պետք:

Սրճագործը, որի ձեռքումն էր աբան, ասաց.

— 15 ղրան կտամ. ավելի չարժե:

Օտարականը գունաթափվեց, իսկ ավազանի կողքին կանգնած պատանին մեռելի գույն ստացավ. աչքերը թրջվեցին:

— Ահա փողն էլ,— շարունակեց սրճագործը:

Հետո հանեց գրպանից և 15 հատ հին ղրաններ համրեց ծախողի բաց ափի մեջ:

— Քիչ է…— ասաց միայն վերջինս:

Բայց մեքենայորեն առավ:

— Քիչ չէ,— դիտեց սրճագործը,— այդքանն էլ դեռ չարժե:

Այդ միջոցին պարսիկներից մեկը զայրացած՝ ցած թռավ օթոցից, մոտեցավ, խլեց սրճագործի ձեռքից աբան և գոչեց.

— Ալլահ Աքպեր, այդ ի՛նչ անխղճություն է արածդ. մա՛րդ, 4 թումանոց հագուստին 15 ղրա՞ն ես տալիս... տուր այստեղ, ես երեք թուման կտամ:

Սրճագործի վայրենի աչքերն արյունով լցվեցին, նա մի քայլ արեց դեպի հանդուգն միջամտողը և ասաց.

— Քե՞զ ինչ. ինչո՞ւ ես խառնվում մեր գործի մեջ. աբայի տերը սա էր. իր ապրանքի գինը ասաց, ես էլ իմ տալիքս տվի. հոժարեց, և այժմ ապրանքը իմ ձեռքումն է, առնողն էիր՝ թող շուտ ձայն հանեիր:

Առաջին քայլը որովհետև եղել էր, իսկույն բոլոր մյուս պարսիկները մոտեցան և միջամտողի կողմը բռնեցին: Վերարկուն բռնությամբ կորզեցին սրճագործի ձեռքից:

— Անօրե՛ն,— գոչում էր մեկը,— խիղճդ ո՞ւր է, որ օգտվում ես մարդու թշվառ դրությունից:

Սրճագործը գոռում էր, հայհոյում էր:

Նրան լռեցրին, հետո պատմիչը, աբան ձեռքին, մոտ գնաց օտարականին, պարզեց նրան ու ասաց.

— Ահա վերարկուդ, վրադ ձգիր, ցուրտ է:

Օտարականը կարմրեց:

— Ինչո՞ւ եք խառնվում իմ գործին,— ասաց նա,— ինձ փող է հարկավոր, տվեք իրեն աբան:

— Քեզ փո՛ղ է հարկավոր. շատ լավ, սպասիր ուրեմն,— ասաց մի պարսիկ,— մենք էլ մարդ ենք, մեր խիղճը չի տանիլ, որ այստեղից այդ դրությամբ դուրս գնաս:

Ասաց, աբան զոռով ձգեց ծախողի ուսին, հետո հանեց գլխարկն ու սկսեց փող հավաքել:

— Աստուծո համար,— ասում էր նա:

Պարսիկը ցնցվեց, մի շարժում գործեց արգելելու, բայց նրան ետ հրեցին: Նա գնաց ընկավ մի անկյուն:

Իսկ Խոսրովը ձեռքով դեմքը ծածկեց:

Փող հավաքողը հերթով մոտեցավ ամենքին.

— Աստուծո համար...

Եվ բոլորն էլ տալիս էին. ինչ որ ունեի տվի, շատ բան չունեի: Մինչև իսկ սրճագործը բարկությամբ մի հատ երկու ղրանոց շպրտեց գլխարկի մեջ:

Երբ ժողովարարությունը վերջացրեց պարսիկը, համրեց փողը:

— Երեք թուման, 4-ղրան,— ասաց նա,— աստված բարաքյաթ տա...

Հետո ծանր քայլերով մոտ գնաց կրակապաշտին ու գլխարկինը շուռ տվավ նրա առջև:

— Ով որ էլ լինիս,— ասաց,— ինչի համար էլ, որ պետք ունենաս, բավական է, որ թշվառ ես... մենք մեր պարտքը կատարում ենք, ահա...

Որքա՛ն վսեմ էր այդ միջոցին այդ խոսքերն ասող պարսիկի դեմքը. կարծես նվիրական խոսքեր էր արտասանում աստուծո սեղանի առաջ կանգնած:

Կրակապաշտն ապուշի հայացքով նայեց խոսողին, նայեց փողին և պահ մի անշարժ մնաց:

Հետո հանկարծ շարժվեց, վեր կացավ, համրեց, փողից 10 ղրան վերցրեց և մոտ գնաց Խոսրովին:

— Խոսրո՛վ, —կպավ նա նրա թևին,— ահա փող:

Պատանին դեմքից ձեռքերը ետ քաշեց. աչքերը կարմրել էին. լալիս էր:

— Առ,— շարունակեց պարսիկը,— մուրացինք, բայց եղբայրդ կազատվի շտապիր և գնա՛...

Պատանին տեղից չշարժվեց, ուշադրությամբ յուր բարեկամի աչքերի մեջն էր նայում:

— Երբեք չենք մուրացել,— ասաց պարսիկը,— բայց աստված մեզ վերից նայում է. գնա՛...

Խոսրովը քիչ էլ սպասեց, հետո առավ փողը ու դուրս գնաց: Շեմքի վրա նա դարձավ և մեկ էլ նայեց դեպի մեզ:

Կարծես շնորհակալ էր լինում. լուռ մի շնորհակալություն, որ ամեն բան արժեր:

Իսկ մյուս կրակապաշտը, երբ պատանին հեռացավ, պահ մի կանգնած մնաց իր տեղում. ապա, առանց մի խոսք արտասանելու, գլուխը կրծքին կախեց և դեպի դուռը քայլեց:

— Փողերիցդ մնաց էլի, մա՛րդ,— գոչեց նրա ետևից սրճագործը:

Մարդը շեմքի վրա կանգնեց, դարձավ և մի հպարտ, բայց տխուր ակնարկ ձգեց մեզ վրա:

Հետո փաթաթվեց վերարկուի մեջ ու հեռացավ:

Երբ դուրս ելա, դեռ երկար տեսա նրան ծառերի տակից հեռանալիս: Մի անգամ իսկ ետ չնայեց. փախչում էր կարծես, քայլերն՝ արագ, իսկ գլուխը միշտ դեպի կուրծքը խոնարհած...